

մարգարիտս յօրինեսցէ եւ թէ ոչ թիւնալեաց
հանդիպեալ օձաբարոյից՝ չէ՛ զարմանք թէ ցօղն ի
թիւն փոխեսցի. զի եւ մաղձոտեալ ստամոքսաց
յատկութիւն է զեւս քաղցրագոյն կերակուրս եւ
բժշկական դեղօրայս առ ինքն դարձուցանել,
չունիմ ասել ինչ առ այսպիսիս. քանզի եւ
Եբրայեցիք զարդարն եւ զանարատն Յիսուսն մա-
հու արժան դատեցին: Բայց այք բարեբարոյք
իցէք, ո՛վ սիրելի ընթերցողք, զբարի բարին յամանս
հոգւոյ եւ շտեմարանաց ձերոց ամբարեցէք եւ
զեռտանն ի բաց ընկեցէք եւ կամ զոմանս ուսարուք
իբր զգրկելի եւ զոմանս իբր զխորշելի. զի գիտելն
զար՝ ո՛չ է չար, այլ ի գործ ածելն: Քանզի եւ
Փրկիչն գիտէր զինչ կրէր ի մարդն. այլ սրբազան
վիպաբանն ո՛չ ասէ թէ կրէր, այլ թէ գիտէր.
քանզի այսպիսի գրեանք են ոմանց հոտ ի մահուա-
նէ ի մահ եւ ոմանց ի կենաց ի կեանս. նաեւ քար
գլորման եւ վէճ գայթակղութեան. արդ այք ոչ
մնասիլ կամին՝ վարժեցին ի համալսարանս եւ
մի նմանիցին դպրաց եւ փարիսեցւոց, այք փակէին
զարօայութիւնն Աստուծոյ, ինքեանք ո՛չ մտանէին
եւ որք մտանէինն՝ չտային թոյլ մտանել: Ո՛վ
տայր ինձ զամենայն Իսրայէլ ի մարգարէս. բայց
աւանդ անբուժելի եւ խխայթեալ վիրաց իմոց.
զի պատիժն առ հնովք սպառնացեալ՝ արդէն առ-
մեզ կատարի. քանզի ո՛ւր են սքանչելի խոր-
հըրդականք, ո՛ւր դպիր իմաստունք, մանկունք
արդարեւ տեսուչք եւ խաբեբայք մեզ տիրա-
պետեալք: Բայց թերեւս այցելութիւն ի Տեառնէ
եկեալ, բացցէ Տէր Յիսուս զաչս սիրելի աղին իմոյ
ճանաչել զչար եւ զբարի, զպատառողն եւ զկար-
կատիչն, զթափողն ընդ վայր եւ զժողովողն ի մի
վայր: Ուրեմն ահա այս ամենալից գանձարանս
հայելի հետեւողաց եղիցի, զի սովաւ թերեւս
կրթեալք գիտացեն զախորժելին եւ զժայթքելին:
Արդ եւ յեղիսն ի բանասիրաց, այցելւո՛ւ Սրբոց Տեղեացն